

ժամանակներն այդ եղանակները ծնունդ առած են, կամ մի նայ «աշուղ» և կամ արեւելեան օտար ազգաց եղանակաց վրայ յարմարեալ իրարմ երգեր են: Այս առումն պարսկէ կը պարունակէ ետքը երգեր. Ա. «Արաբոյ արտասուք», ներդաշնակած է Ալեուան Խ'նեօհ Բ. «Հերթը որդեակը», ձայնադրած է Լ. Եղիազարեան և ներդաշնակած ժորժ Մարտի. Գ. «Կիրկիկ», ձայնադրած է Լ. Եղիազարեան և ներդաշնակած է. Ռեյէր. Դ. «Հայրիկ», ձայնադրած է Լ. Էղիազարեան և ներդաշնակած ժ. Պորո. Ս. «Զմե՛ գլխի», ձայնադրած է և ներդաշնակած է Լ. Ա. Պուրջոյ-Տիկուտայէ. Զ. «Յոյզ բարձր», ձայնադրած է Լ. Եղիազարեան և ներդաշնակած ժ. Բ. Ալէկէրէն. Է. «Օրորոցի երգ», ձայնադրած է ներդաշնակած է Գ. Կազաչէնկո: Այս ամեն ժողովրդական երգաց դազդ. և իտալ. Թարգմանութիւններն ալ կը գտնուին նայերենին զիմացն: Գազդ. շատերն թարգմանած է Բիւր (Սլափ), իսկ իտալերեն՝ ամենն ալ Պ. Պոնովիգո: Երգարանին ծածրը զարգարուած է նայական ճաշարով ճարտար, գեղանի և գեղարուեստ նկարով մը, որ եմանապէս նայու մը, Ս. Պէգրիւստի գիւտն է. Պ. զծագրէր իր այդ պատարասած շրջանակին մէջտեղը գեանդած է Անայ ա. երես Ս. Գրիգոր Լուսաորիչ եկեղեցւոյ գեղեցիկ, քանդակ կամարածն. զուրը, որուն տակ նստած է նայ սովի մը որ սրինգով զանները կ'արածէ: Միով բանին թէ պատկերն և թէ անոր շրջանակն ուրքան նայական, որ, սպեան ալ յարմար կը դառնայ մեր նայ ժողովրդական երգաց այդ երգարանին, որ Պ. Եղիազարեանին շնորհիւ՝ նոր փառք մ'է մեր արքի մամուլն:

Հ. Ս. ԵՐԵՎ.



### ԶԱՆՆԻՍ ԶԱՆՆԻՍՆԵՐ

ԱՐՏԱՍԱՆՇՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

ՆՈՐ ԿԵԱՆՔ. — Որբերը մտածելը՝ այդ՝ այլ եւս նուիրական զարձած է. որբերը և անոնց տխուր վիճակը՝ քար կուրծքերն միայն չեն բխեցընել արցունքներ: Լուսորայի կիւսակնայ Հայ Հանպար իրեն կը ձգէ մեր ուշադրութիւնը՝ հրատարակած որբախօս գրութեամբն. անոր ընթերցումը մենք մեր արբասը Հասարակութեան կը յանձնենք, նա շատ լաւ զաղափար մը պիտի տայ մեր սըլզուար Հայակներու գիւսագնական, վսեմ՝ և առաքինի գործոց, և մեզ ցոյց պիտի տայ անոնց ամենն տխուր ու սրտածմիրկ նիւթական կացութիւնն: Մտածենք որբերուն վրայ,

ուշադրութեան անունը անոնց ապագան, վասն զի անոնք են յալորդ ազգութիւնը. չէ՛, չթողունք զանոնք լքեալ, չթողունք որ անոնք ազգութեան արմատէն հեռանան և օտար երկրի մէջ կորսուին անհետանան ընդ միշտ: Ուշադրութեան կարտ ան որբերու մասին այն նամակներն՝ որոնք Հրատարակուած են Նոր կեսնքի մէջ, որոց մի քանին Համաստութեամբ կ'արձանագրենք.

«Պատկի մանչ մը, որ ուրախ ու Հանգիտ էր որբանոցին (Խարբորդի) մէջ, չկրցաւ մնալ այստեղ, որովհետեւ կը զգար թէ պարտաւոր էր իր պտուռ մեծ մայրը խնամելու. ու աչք պզտիկը մէկ տարեկան էր միայն... Որբանոցին տալքը յաճախ թոյլատուութիւն խնդրած են կերպար լուստելու, որպէս զի այդ կերպով խնայուած ուստիքը թշուառներուն արուճիւ — Քաղաքին (Տիգրանակերտ) գերմանական երկսեռ որբանոցը, որ... Հինդ վեց ամսէ ի վեր վերջապէս փակուած կը մնայ, որբերը դուրս հանուեցան, ու այն մէկն ձորան փողոցները կը թափառին անտէր անօթի: Որբանոցին գերմանացի տնօրէնը ալ ճարակատար, սկսած է որբանոցին զոգրէրը ծախել ու կը պատարասուի քաղաքէն հեռանալու — Փղիէն երկու պզտիկ ելան Խարբորդ եկան, կը գրէ Տր. Սարբերմ ու աշակեցին որ զերենք որբանոցը ընդունին: Ոչ Հայր ունին մէ մայր: Անձկութեամբ երեսու ի վեր կը նային՝ իրենցմէ մին կ'ըսէ. — Տարբ մը միայն իս ընդունէ, որպէս զի կարգաւ սորվիմ և մարդ ըլլամ: Մինչեւ որ կարգաւ զբէ շարվիմ, մարդ չեմ ըլլար: Այդ տարուան միջոցին կրնամ նաեւ կօշիկ նորիկ սորվիլ. ու ան ատեն ինքզինքս կրնամ ապրեցընել »:

Այս պատմութիւններն որոնք սրտածմիրկ հեծեմանք են մեր թշուառ որբերուն, որչափ փափաքելի էր որ անոնց արձագանգները բաղեւէին Հայ կրեստոսներու դրան, և Հասունին անոնց ակամայ ծանրալուր լսելեաց: Որբեկներու վայնատունը անէճքներ են՝ որ կը թափին այն Հայ միլիթուատեարք և Հարուստներու վրայ, որոնք անխիճօրէն՝ անտարբար կը մնան և չեն ուզեր լսել իրեն ազգին թշուառ ծնունդներու աղկտուր կականները. անէճքներ են, ուղղուած այն Հարուստներուն, որոնք մարդատիրութեան, և որ մեծն է՝ ազգատիրութեան ատաքինութիւնը՝ իրենց պալատներէն զուրս Հայածած, խնջոյքներու, Հանդէսներու, զբօսանքներու Համար կը վատնեն իրենց Հարստութիւնը շաղկութեամբ: Բայց ասոնք անտարբար են և նայպէս կը

ման. Վանն էր շրջակայ գիւղերն, յետին աստիճանին անօթութեան մէջ են, սովոր թշուառութիւնը, աղքատութիւնը, մերկութիւնը հոն կը բռնանայ. Երուսաղեմայ սովը և անտի յառայ եկած քստմեղի միջնադէպը՝ կը կրկնուին Վասպուրականի մէջ. անօթութիւնը կը ստիպէ մայր մը իր հարազատ զառնուկ գաւակը սպաննելու և կը սպաննէ, և կը փորձէ անձնապաշտ իսկ ըլլալ. ուրիշ երեք հայեր կոմս Ուկրինիի խզուլի վախճանն մեզ յիշել կու տան. օրերով զուրկ լինելով պատառ մը չոր հացէ, կը հիւծին, կը մաշին և վերջապէս միայն մահուան հրեշտակը անոնց կը զիջայ. Այս մի և նոյն ողբալի կացուի թեան մէջ են ֆղեցիքը. հոն եւս սովը նախնիներն կը գործէ մեր թշուառ ժողովրդեան մէջ. մեր գեղջուկներն որ չոր հացով կ'ապրին և փառք կու տան Արարչին, այսօր այն չոր պատտառն ալ զուրկ են. ֆղեցին պատառ մը հաց կը խնդրէ իր ազգային հարուստներէն, բայց ոչ ոք կը լսէ անոր. և նա կը ստիպուի արմատներով և խոտղէններով իր աօրեայ սնունդը ձարել . . . :

**ԵԱՒԻՂ.** — Արտասահմանի այս նորստին հանդէսը՝ ցոյց կու տայ յուրը ուղղութիւն մ'անննալ, և առողջ գաղափարներով առաջնորդել արտասահմանի ազգային գաղութին: «Արտասահմանի Հայ Մամուլը» վերնագրով թնուցիկ տեսութիւն մը կը կատարէ բնդհանուր Հայ մամուլ վրայ. և արտասահմանի Հայ լրագրութիւնը՝ առաջայ և թրքահայ լրագրութիւնէն շատ վեր կը դասէ. Համառոտակի յիշենք իր մի քանի տողերն.

« Պուտայ մէջ չորս Հայ օրաթերթեր կը հրատարակուին այսօր. բան մը որ աւելի նպատակ ունի ժամանակներու մէջ՝ երբէք սեղի ունեցած չէ: Հոն՝ գրականութիւնը շատ քիչ տեղ ունի: Կարելի չէ խօսիլ ժողովրդեան մտքին ու լիդին ընդացած սիրելազոյն նիւթերուն վրայ. . . նոյնպէս գրական, գիտական, լեզուաբանական բանասիրական գիւղերուն մէջ շատ վար, շատ աննշան տեղ մը միայն կրնայ բռնել. . . կովկասէ Հայ լրագրութիւնը շատ տարբերութիւն ունի թրքահայ մամուլէն »:

Մենք Համակարծիք չենք այս նորածիլ հանդիսին. իր ամբողջ յօդուածը՝ գրուածաբար մ'է արտասահմանի լրագրութեան, իսկ ու-

սահայ և թրքահայ մամուլ վրայ ունեցած գաղափարները քիչ մը յոռետես կը գրուենք: Ներկայիս արտասահմանի մէջ ունինք ոչ սակաւ լրագիրներ, յորոց ի բաց առեալ Մեխիմարեան երկու հանդէսներն, Քանաուեր, Համալսարան և նորածին կրօնական հանդէսը, միւս ամէնն ալ մէկ նպատակի կը ծառայեն. անոնք արտասահմանի մէջ շատ առնանշանորհներ՝ անննալով, այժմ աւնոնց ծառայութիւնն այնքան չէ՛ որչափ որ կրնար պահանջուիլ: Մինչեւ ցարդ արտասահմանի մէջ չերեւցաւ Մշակի, Բիւզակի, Գիւնի, Արեւելքի և Նոր-դարի Համալսարանի օգտակարութեամբ մի ազգային լրագիր, որ կրնար ըլլալ, և աւելի կատարեալ: Ազգագրական հանդէս, Բիւրակ, Թատարն, Լուսնայ, Մարտ, այս խոշոր հանդէսներուն զիմաց, ստակալին փառքով պատուով, զուգահաւասար հանդէս մը չծնաւ արտասահմանի նոր գաղութը. և Քանաուերը բացառութիւն մ'է:

Թ Բ Ա Ն Ա Յ Թ Բ Թ Բ

**ԲՈՒՐԱԿԱՆ.** — Մենք շատ անգամ առիթ ունեցած ենք Պուտայ այս ազգաբնական ընտիր թերթին վրայ խօսելու և վեր հանելու անոր գովելի ծառայութիւններն. Բիւրակը, մեր հին և անծանօթ գրականութեան, բարքերու և առասպելներու մշակման և լուսբանութեան մեծ նախանշանդիր պատճենը. այս այսպէս լինելով, մենք կը կարծէինք որ գրարար լեզուն ալ՝ հայկական հոսութեանց ամենէն թանկագին սպարներն լինելով՝ անոր եւս Բիւրակն մեծ պաշտպան պիտի լինի. բայց իւր վերջի զոյգ հանդէսն (13-14) մեր կարծեաց բոլորովին հակառակը ցոյցուց: — Մի քանի տասնեակ տարիներու մէջ մեր հին ու գրական լեզուն ամենամեծ հաւածանքներն կրեց, և նոյն հաւածանքները մինչեւ մեր օրերն չզաղարկելով, հիւժեալ և կաթուածահարեալ վիճակի ենթարկուեցաւ մեր գրականութեան հօգին: Նա հալածուեցաւ մամուլէն, հալածուեցաւ տարրական, միջնակարգ և նոյն իսկ բարձրագոյն վարժարաններէ, հալածուեցաւ և արտօրուած

մնաց միայն նուիրական տաճարներու մէջ .  
և հոն եւս նոս անարժան կը գտաուի, ան-  
կից ալ դուրս վանելու զարաններ կը մտա-  
ծուին .

« Մենք ինչ աստիճան կ'օգտուինք մեր եկե-  
ղեցիին այն հոգեւայտ մաղթանքներէն որոնք  
կու գան մեր ականջին թմբուկին բաղաւորելու,  
առանց սակայն իմացական տպաւորութիւն  
մը թողուլ մեր մտքին վրայ: Այ՛ն, մեզի հա-  
մար աշխարհաբար, պարզ մեկին ոճով ար-  
տասանուած մաղթանք մը աւելի փրկաւար  
պղծեցութիւն մը կ'ունենայ քան թէ այդ ա-  
ղօթքներու զրաբար հրաշակերտները: Մեռ-  
ներէք մեր սակիէ կոյտերու վրայ... կարօտ հա-  
ցի մը կտորին »:

Այս վերջին երկու տողերը բուրբուրին ան-  
ճաշ ճարտասանական բացատրութիւն մ'են  
և եթերէն աւելի ցնդական: Բնութիւն մէջ  
նոն է այն թանկագին ոսկին՝ զոր մարդ  
չկարենայ շահեկան և պիտանի բնեղ և ծով  
ամալ, կամ յաւիտենականաբար թաղել հո-  
ղին մէջ. քանի որ զրաբարը թանկագին  
ոսկի մ'ըլլային կ'ընդունինք՝ ինչն չոր հացի  
կարօտն զգանք: Փոխանակ կորուստի՝ զիւ-  
տի պիտենք: Այն օրէն երբ զրաբարը անխնայ  
հարուածներու ենթարկուեցաւ, անկից ի վեր  
կը գաւաչուէր, որ պիտի գայ ժամանակն՝  
որ նոյն մեր նախնեաց լեզուն, պիտի մը  
պիտի դառնայ, և արժանի թաղման. և այժմ  
զրաբարը նոյն վիճակի մէջ է. տեղ տեղ  
նոյն իսկ ժամերգութիւններն աշխարհաբար  
կը կտատարուին. այդ բաւարուն չեղաւ, ներ-  
կայիս Բիշրակն կը քարոզէ որ պսակի ա-  
րարողութիւնն ալ անպատճառ պէտք է աշ-  
խարհաբար կտատարուի. վասն զի հարս ու  
փեսայ չեն հասկնար եղեր արարողութեան  
ատեն « միեկե ի մամ տէր ես » զրաբար և  
խիստ զրաբար հարցումը: Չերկարի մեր  
խօսքը. շատ կնճռոտ չէ աշխարհաբար—զրա-  
բար խնդիրը, թաղել զրաբարը, այդ ամե-  
նանձն անդիմութիւն մ'է. և ինչպէս շատին  
սպազն համար լատին լեզուի թաղումէ հայ-  
րասպանութիւն մ'է, կ'ըսէ Պաշկելի, նոյնպէս  
նաեւ հայերէնի համար՝ կրնանք ըսել, որ մեծ  
եղեռն մը գործած ենք զրաբարի հետ այսպէս  
վարուելով: Աշխարհաբարը թող լինի ժողո-  
վրդական մամուլ լեզուն, այդ օրինուոր է.  
բայց նոյն լեզուն նաեւ եկեղեցւոյ չեմէն ներս

մացընին՝ բուրբուրին ապօրինի և դատա-  
պարտելի է: Գրաբարը պէտք է ապրի, վասն  
զի անիկայ ազգային լեզուաբանական հին  
և առողջ արմատն է, ոսկից սնունդ առած  
է հայ ազգութիւն լեզուն, շատ մը գաւառա-  
բարբառք. զրաբարը պէտք է ապրի, վասն զի  
անող միայն կրնայ մեր ներկայ խօսած ու  
գրած լեզուն բարեշրջում, կարգ ու կանոն  
ընդունիլ. զրաբարը պէտք է ապրի, վասն  
զի անող մենք պիտի ուսումնասիրենք մեր  
նախահարց պատմութիւնը, կրօնքը, գիտու-  
թիւնը, պատկանելի գրութիւններ և թարգ-  
մանութիւններ: Եւ զրաբարը ապրելու հա-  
մար չկայ այլ միջոց, բայց եթէ վարժա-  
բաններու դռներէն ներս մուծել զայն. և այն  
ատեն « միեկե ի մամ տէր ես » զրաբար  
հարցումը սանսկրիտ լեզուով պիտի չկարծեն  
սչ հարսն և սչ փեսան. և այն ատեն զրաբար  
աշխարհաբարը Սենաարայ դաշտի լեզուն  
հեռանալով, կարգ ու կանոն, պեղ ու գոյն  
մը պիտի ունենայ, հայածական վարելով  
ձկնց ու մեկըր, կոր ու կուրը:

Պ Ա Ր Ս Վ Ա Ն Ա Ս . Մ Ա Մ Ա Ռ Լ

Յ Ր Ա Յ Ր — Պարսկաստանի Հայոց ընդ-  
հանուր կրթական վարչութեան: — Այս վեր-  
նագրով խմբագրութեանս հառաւ մի յայ-  
տագիր. զոր զեռ չկարդացած, պահ մի մաքով  
կը թափափնը՝ անցեալ և ներկայ պարսկա-  
հայոց զրական գործունէութեան մէջ: —  
Պարսկահայք շատ տարիներ է ի վեր գրա-  
կան տեսակետով մեծբարեփոխ հանգիստ մը  
կը վարեն: Ժամանակաւ մեր ազգայնոց այդ  
հեռուոր ու անջատ հասարակութիւնը հայ  
մամուլը հարստութեան և յառաջագիտութեան  
եռանդեամբ աջակցեր է, որուն վկայ է  
ժամանակակից պատմութիւնը. նախնի պարս-  
կահայք զրական և կրթական յառաջակի-  
մութեան աւելի հոգի, սէր ու խանդ ունե-  
ցեր են և միանգամայն զնոյն գործով ցու-  
ցուցած, քան թէ նորերն. և պէտք է խոս-  
տովանիլ նաեւ, որ հին պարսկահայք չու-  
նէին այն նախանձելի ազատութիւններն,  
առանձնաշնորհներն և ամէն տեսակ զիւրու-  
թիւններն զոր ներկայիս ունին նորերն. և

սակայն՝ նորը բաղդատամբ հնոց, շատ յետամնաց են: Հին պարսկահայք ունին կարգադրեալ մամուլ մը, որ հայ մատենագրութեան լաւ և գնահատելի երկեր շնորհած է շնորհիւ նոր Զուգայի Ամենափրկիչ վանաց Խաչատուր անուն առաջնորդին՝ որ իր տոկուն աշխատութեամբ նախ հիմնագիր եղած է պարսկահայ մամուլին, և յետոյ իր Հպատակ կուսակրօս արեղայ բանասիրաց՝ աջակցութեամբ եկեղեցական և կրօնական գրքեր ի լոյս բնծայած: Հարանց վարք, Առեկի Ժամագիրք, Աջարիայի պարզատումար, Գիրք ժողովածոյ, Աղեքսանդր վարդապետ, Մրքոզ, այս ամէնն Ամենափրկիչ վանքին հրատարակութիւններ են. ասոնցմէ զատ Պարսկահայք հրատարակած են ի վաղարշապատ՝ Տօնադոց, Տաղ. Սիմ. կարդ. Պարտապճար, Յովսէփոս. յԱժտերխան Առեկարանուրիակ Յ. Արդար. Մեկն. Սաղմուսաց: Մեր յիշած այս գրոց անուններէն որոշ կը տեսնենք որ Հին պարսկահայք աւելի եկեղեցական գրքեր հրատարակած են, և այդ՝ ժամանակին պահանջն էր. բայց ինչ որ ալ ըլլայ, ատոնք մեզ շատ լաւ գաղափար մը կու տան Հին պարսկահայոց գրական գործունէութեան՝ որ յետոյ բոլորովին պակսեցաւ: Ներկայիս մեր նոր պարսկահայք մի քանի տարիներէ ի վեր շնորհիւ Պարսկաստանի վեհապետ ինքնակալ Շահին, կը շարժին գրական գործ և արդիւնք մ'ունենալու. սթափած կ'երեւին իրենց բազմաթամանակեայ թմբիւնէն. կ'ուզեն կանգնել մամուլ մը և հաստատել կրթարաններ, և արդէն մի քանի նախակրթարաններ և ուրիշ գովելի վարժարաններ բացած են. ունին մի քանի բարեգործական Հաստատութիւններ. բայց զեռ աւելի կ'ուզեն զարկ մը տալ մտաւորական յառաջադիմութեան, որուն ապացոյցն է մեզ նոր հասած կրթական ծրագիրն: Պարսկաստանի արդի վեհապետ Շահն Մուշաֆֆկու-Էլզէին իրեն ուսումնասիրութեամբ խրախոյս կու տայ իւրայնոցն և Հպատակ Հայոց՝ նորանոր բարձր ուսումնարաններ հաստատելու: Մենք կը յիշենք հոս մեզ հասած այդ ծրագրին մի քանի սողերն.

« Պարսկաստանի Հայ ազգաբնակչութիւնը,

որ երկրէ բոլոր միւս ժողովուրդներէց առջ զգացել և կրթութեան անհրաժեշտութիւնը և զանազան բազմաբնակութեան, Թէհրանու, Թավրիզու, Կոր-Ջուղայում, Թաշտում, . . . մի քանի զարոցներ է բացել պէտք է օգտուլ քաղի ուսումնասիր Շահն այդ տրամադրութիւնից և կրթական գործին աւելի մեծ ծաւալ տալ . . . Այս նպատակը հետզհետէ իրագործելու համար հիմնուած է Թէհրանում մի կեդրոնական յանձնաժողով և Պարսկահայոց կրթական կեդրոնական յանձնաժողով . . . կեդրոնական յանձնաժողովի առաջիկայ գլխաւոր գործը լինելու է . . . Բ) Բանալ երեք կեդրոնական ուսումնարան, մտաւորապէս ֆունտական Լիտէրերի ծրագրով, Թէհրանում, Թավրիզում և Կոր-Ջուղայում . . . Բ) Բանալ աստիճանաբար մի քանի միջնակարգ լոյս — դասարանեան զարոցներ այլ կեդրոններում . . . Գ) Բանալ ստորին ժողովրդական — ծխական, մէկ և երկ — դասարանեան զարոցներ գիւղերում և մանկական պարտեզներ »:

Այս ամէնը շատ լաւ և շատ միթմարական են, և յաջողութեան համար այժմէն յանձնաժողովը հրաւեր կը կարգայ բոլոր ազգային կրթութեան հարուստ շոջերուն որ աւակցին պարսկահայոց այդ կրթական սուրբ գործին: Հայ գրականութիւնը հարստացնելու համար, պարսկահայք ետ կրնան մեծ ծառայութիւն մ'ընել. միայն կը մնայ այդ հայ հասարակութեան մտաւորական դաշտն խոսպան, անապատ ու աւերակ չթողուլ. պէտք է անկաւ մշակուի, վասն զի գրական ամենէն բեղմնաւոր և արգասաբեր երկիրն է. յորոց ժլեր, ժողկեր են Թաֆֆի, Գամառ-Քաթիպա, Արոփան, Էմին, Ալամ դարեան, այդ պարսկահայ մեծ հանձնարները և տաղանդաւոր բանաստեղծներն:

Հ. Ս. ԵՐԵՄՅ՝



ՌՍՍԻՒՄԸ ԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ

(Շաբ. տես յէջ 219)



ԵՐԿԻՍԱՆԵՐ՝ մուլութիւնները ջախջախելու և Բարին, Գեղեցիկը յարգել տալու համար Հեգնութեամբ զինուած մարդու սըր-